

## ԱՆՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆ

Մակրոպենսական քաղաքականություն և  
կանխադեսում, բակալավրիատ, 4-րդ կուրս

## ԴՈԼԱՐԱՑՄԱՆ ՇԱՐԺԵՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Հիմնաբառեր.** դոլարացում, դրամավարկային քաղաքականություն, գուցանիշներ, ֆինանսական հարկած

Կարևորելով դոլարացման մակարդակի կրճագումը ՀՀ դրամավարկային քաղաքականության գրեսանկությունից՝ հոդվածում վերլուծվել է դոլարացման մակարդակը բնութագրող ցուցանիշների շարժմանը ՀՀ-ում 2006–2017 թթ.: Բացահայտվել է ՀՀ գուշտեսության իրական և ֆինանսական հարկածների դոլարացման մակարդակը: Մեկնարանվել են դոլարացման հաղթահարմանը նպասկող քայլերը:

Դոլարացման երևոյթը, լինելով համաշխարհային տնտեսության արդիական հիմնախնդիրներից մեկը, շարունակում է ուսումնասիրվել: Տնտեսագիտական գրականությունում և գիտական հանրույթում շրջանառում են դոլարացման տարբեր սահմանումներ, որոնց մեկնարանման հարցում էական տարակարծություններ չկան<sup>1</sup>: Դոլարացումը միջազգային դրամական շուկայում տնտեսական երևոյթ է, որի ժամանակ արտարժույթը (առավել հաճախ ԱՄՆ դոլար) լայնորեն օգտագործվում է երկրի ներսում կամ տնտեսության առանձին հատվածներում կատարվող գործառնություններում: Տարբեր երկրներում տնտեսության անցումային փուլում ազգային արժույթի նկատմամբ անվատակությունը և մակրոմիջավայրի անկայունությունը տնտեսավարող սուբյեկտներին դրդում են ազգային արժույթը փոխարինել այլ երկրի ավելի վստահելի արժույթով:

Դոլարացումը հաճախ համարվում է երկարատև մակրոտնտեսական անկայունության պատճառ: Տնտեսական գործակալները հետաքրքրված են իրենց դրամական միջոցների կայուն գնողունակությամբ: Այդ պատճառով, պատմականորեն գնաճի բարձր և խիստ փոփոխական տեմպեր ունեցող երկրներում նախապատվությունը տրվում է ավելի կայուն օտարերկրյա արժույթին:

Կարևորվում է այն հանգամանքը, թե տնտեսության որ հատվածում է այն խորացած: Տարբերում են դոլարացման հետևյալ տեսակները՝ ֆինանսական, իրական և արժույթի փոխարինման հատվածներում: Սակայն, համապատասխան ցուցանիշների բացակայության պատճառով, իրական դոլարացման քանակական գնահատման փորձերն անարդյունավետ են: Վերջին շրջանում դոլարացման վերաբերյալ աշխատությունները հիմնականում վե-

<sup>1</sup> Ste'ն Կորակով Լ.Պ., Էկոնոմիկա և իրավու, Մոսկվա, 2004, Սլովար էկոնոմիկական տերմինում, Ակադեմիկ.Р.У. 2001,

Լոպատников Լ.И., Էկոնомикоматематический словарь: Словарь современной экономической науки, Москва Год 2003. էջ 70,

Schuler Kurt "Basics of Dollarization", Staff Report, Joint Economic Committee , U.S. Congress, July 1999, էջ 5,

Borensztein Eduardo, Andrew Berg "The Pros and Cons of Full Dollarization", IMF Working Paper No. 00/50, 25 Apr 2001, էջ 4:

րաբերում են ֆինանսական դոլարացմանը: Ֆինանսական դոլարացումն անցումային և զարգացող տնտեսությամբ երկրների կենտրոնական բանկերի համար մեծ վտանգ է: Տոկոսադրույքի միջոցով ԿԲ հաղորդած խթանների էական ազդեցություն չեն ունենում ֆինանսական շուկայի վրա: Ֆինանսական դոլարացումը կարող է ազդել նաև հարկաբյուջետային քաղաքականության, մակրոպրուենցիալ կարգավորման և այլ գործիքների վրա: Այն կարող է կրճատել պետական բյուջեի եկամուտները կամ ավելացնել բյուջետային ծախսերը՝ դրանց օտարերկրյա արժույթով փոխանակման դեպքում (անվանական փոխարժեքի փոփոխության դեպքում): Դոլարացման մի ձևը կարող է նպաստել մյուսի զարգացմանը, կամ դրանք կարող են լրացնել միմյանց:

Որոշ երկրներում, այդ թվում՝ <<-ում, զարգացած ֆինանսական շուկաների բացակայությունը, ինչը կաջակցեր ինդեքսավորված գործիքների իրացվելի շուկային և կապահովեր դոլարային գործիքների պարզություն, թափանցիկություն և հուսալիություն, կարող է հանգեցնել մասնավոր դոլարացման աճին:

<<-ում ոչ պաշտոնական դոլարացումն արմատավորվել է դեռևս 1993 թ.՝ ազգային արժույթի ներդրմանը գուգահեռ, գերգնաճի և դրամի նկատմամբ մարդկանց անվտահության պայմաններում: Սկզբում դոլարացումն արմատավորվել է իրական հատվածում, իսկ ավելի ուշ՝ 1996–1999 թթ. այն խորացել է նաև ֆինանսական հատվածում:

Տնտեսության դոլարացման գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլ:

- ակտիվների փոխարինում,
- արժույթի փոխարինում,
- ֆինանսական համակարգի դոլարացում:

<< կենտրոնական բանկը դոլարացման մակարդակը չափում է հինգ տարբեր ուղղություններով.


D1– ռեզիդենտների արտարժութային ավանդների և փողի զանգվածի հարաբերակցություն,

D2– ռեզիդենտների արտարժութային ավանդների և ռեզիդենտների ընդհանուր ավանդների հարաբերակցություն,

D3– ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ցագահանջ ավանդների կշիռ՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ժամկետային ավանդներում,

D4– ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ժամկետային ավանդների կշիռ՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ժամկետային ավանդներում,

D5– ռեզիդենտ իրական հատվածին արտարժույթով տրամադրված վարկերի և ռեզիդենտ իրական հատվածին տրամադրված ընդհանուր վարկերի հարաբերակցություն:



Գծապատկեր 1. Դոլարացման մակարդակը գնահապող հինգ ցուցանիշների շարժընթացը 2006–2017 թթ.

Որպես կանոն, դոլարացման մակարդակը նկարագրելու համար դիտարկվում է առաջին ուղղությունը՝ D1 ցուցանիշը՝ ռեզիդենտների արտաքութային ավանդների և փողի զանգվածի հարաբերակցությունը: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ից, մինչև համաշխարհային ֆինանսատեսական ճգնաժամը <<-ում D1 ցուցանիշի գծով նկատվում է անկում, ինչը պայմանավորված է ֆինանսական համակարգի միջնորդության աճով, որը նպաստել է ազատ ազգային արժույթի նկատմամբ պահանջարկի աճին, դրամի՝ դոլարի նկատմամբ շարունակական արժենորմամբ և վերջին հաշվով դրամի նկատմամբ վստահության աճով: 2008 թ. արձանագրվել է վերոնշյալ ցուցանիշի ամենացածր մակարդակը՝ 20,40%: Սակայն ճգնաժամը լրջագույն վնասեց << տնտեսությանը. արձանագրվեց երկնիշ տնտեսական աճ, կրճատվեցին արտահանումը, արտասահմանյան ուղղակի տրանսֆերտները, ներդրումները, և միայն մեկ տարվա ընթացքում պետական պարտքը մոտավորաբես կրկնապատկվեց: Կարևոր է նշել նաև, որ 2009 թ. մեկ օրվա ընթացքում շուրջ 20%-ով արժեգրկվեց դրամը, ինչը մեծապես հարվածեց դրա «հեղինակությունը», և դրամը սկսեց գիշել իր դիրքերը: Մեկ տարվա ընթացքում D1 ցուցանիշը կրկնապատկվեց՝ կազմելով 44,39%: Հաջորդ տարիներին այդ միտումը շարունակվել է: 2014 թ. նոյեմբեր ամսվա երկրորդ կեսից դոլարացման մակարդակը նորից սկսեց խորանալ:

2016 թ. մարտի վերջի դրությամբ ռեզիդենտների արտաքութային ավանդները կազմել են 997,3 մլրդ դրամ, իսկ փողի զանգվածը՝ 1872.0 մլրդ դրամ: Այսպիսով, D1 ցուցանիշը կազմել է 53.28%, ինչը վերջին տասնամյակում գրանցված ամենաբարձր ցուցանիշն է: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ միայն ավանդադրված արտաքույթը ավելին է, քան շրջանառությու-

նում առկա կանխիկ դրամը և դրամով ժամկետային ու ցափահանջ ավանդները միասին վերցված:

2017 թ. D1 ցուցանիշի մակարդակը մնացել է բավական բարձր՝ կազմելով 48.21%: Ռեզիլենտների արտարժութային ավանդները կազմել են 1071,2 մլրդ դրամ, իսկ փողի զանգվածը՝ 2221,9 մլրդ դրամ:

Պետք է նշել, որ D2 ցուցանիշի գծով վիճակը համարվում է ծանր, եթե այն գերազանցում է 50%-ի շեմը: Հայաստանում այն գրեթե միշտ ավելի բարձր է եղել: D2 ցուցանիշի ամենաբարձր արժեքը գրանցվել է 2010 թ՝ 68.18%, իսկ ամենացածր ցուցանիշը եղել է 37.44%՝ 2008 թ.: Տվյալ ցուցանիշը 2006 թվականից հետո կտրուկ անկում է ապրել, սակայն 2009 թ. D2-ը գրանցել է 27.19% հավելածի տեմպ:

D3 ցուցանիշը վերջին տասը տարիների ընթացքում դրսկորել է կայուն նվազման միտում: Սակայն պատճառն այն չէ, որ կրճատվել են ռեզիլենտն ֆիզիկական անձանց արտարժույթով ցափահանջ ավանդները, այլ այն, որ ռեզիլենտն ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն են աճում շատ ավելի արագ տեմպերով: Վերջին տասը տարիների ընթացքում ռեզիլենտն ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները աճել են շուրջ 16 անգամ կազմելով 976.9 մլրդ դրամ:

D4 ցուցանիշը մինչ ֆինանսատնտեսական ճգնաժամը նվազել է հասնելով 49,15%-ի, այնուհետև մեկ տարվա ընթացքում հատել է 80%-ի շեմը, որի հիմնական պատճառներից են 2009 թ. դրամի կտրուկ արժեզրկումը և արձանագրված գնաճի բարձր մակարդակը, որը դրամով ժամկետային ավանդի իրական տոկոսադրույթը դարձրեց բացասական: Սակայն եթե անգան չինեին վերոնշյալ երկու պատճառները, միևնույն է, այս ցուցանիշը աճելու էր ճգնաժամի ընթացքում, քանի որ տնտեսական գործակալները ձգուում են ճգնաժամի ընթացքում իրենց միջոցները ներդնել բարձր իրացվելի ակտիվներում:

Իրական հատվածի վարկավորման ծավալները շատ արագ տեմպերով աճել են վերջին տասը տարվա ընթացքում, սակայն դրան զուգահեռ ավելի արագ տեմպերով են աճել իրական հատվածին տրամադրված արտարժութային վարկերի ծավալները: Մասնավորապես, եթե ռեզիլենտն իրական հատվածին տրամադրված արտարժութային վարկերը 2006 թ. մարտին կազմել են 57.3 մլրդ դրամ, ապա 2016-ին արդեն՝ 968.6 մլրդ դրամ: Այսինքն, այս ցուցանիշը տասը տարվա ընթացքում աճել է շուրջ 17 անգամ:

Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից են ներմուծման մեծ ծավալները, որոնք շուրջ եռակի գերազանցում են արտահանումը, իսկ ներմուծողին անհրաժեշտ է արտարժույթ, որը և առաջացնում է արտարժութային վարկերի նկատմամբ մեծ պահանջարկ:

Վերոնշյալ D5 ցուցանիշի մակարդակի շարունակական խորացման հիմնական պատճառը ֆինանսական շուկայի, մասնավորապես՝ ֆոնդային բրոսաների թերզարգացածությունն է, որը բանկերի արժութային ռիսկը զապելու նպատակով «ստիպում է» ներգրավված արտարժութային միջոցները տեղաբաշխել արտարժույթով՝ արժութային ռիսկը ֆինանսականից տեղափոխելով դեպի իրական հատված:

ՀՀ-ում դոլարացումն արմատավորվել է դեռևս 1993 թ., սկզբնական շրջանում՝ տնտեսության իրական հատվածում, իսկ 1996-1999 թթ. խորացել

Է ֆինանսական հատվածում: Բանկային համակարգի հանդեպ վստահության վերականգնմանը զուգահեռ մինչև 2002 թ. ֆինանսական դոլարացման մակարդակը աճել է: Մինչև 2005 թ. << տնտեսությունում առկա էր ֆինանսական միջնորդության ցածր և դոլարացման բարձր մակարդակ: 2005 թ. դոլարացման մակարդակի ճնշման գործում մեծ դեր ունեցավ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» << օրենքի ընդունումը: 2006 թվականից մինչ 2008 թ. ընկած ժամանակահատվածը բնութագրվել է ապադուրացմամբ և գնաճի նպատակադրմամբ: Հետճգնաժամային շրջանում դոլարացման մակարդակը բարձրացել է, և զարգացած տնտեսական ինստիտուտների, մակրոտնտեսական իրավիճակի կայունացման պայմաններում էլ <<-ում այն շարունակում է բարձր մնալ մինչ օրս:

<< կենտրոնական բանկը պետք է զգուշ լինի իր գործողություններում դոլարացման մակարդակի բարձրացում թույլ չտալու համար:

Առաջին հերթին այն պետք է բանկերի համար ստեղծի ազգային արժույթով պահպաների ներգրավման առավել նպաստավոր պայմաններ: Վերջին տարիներին այս ուղղությամբ իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ. << ԿԲ խորհրդի իշեցրել է բանկերի դրամական պարտավորությունների դիմաց պարտադիր պահուստավորման նորմը՝ սահմանելով 2%, իսկ արտաքութային պարտավորությունների դիմաց՝ 18%: Մրանով բանկերի համար ավելի հարմար է դառնում ազգային արժույթով պահպաների ներգրավմամբ և ծախսատար՝ օտարերկրյա արժույթով պահպաներինը, ինչն էլ շարժանիթ կիանդիսանա ֆինանսական հաստատությունների համար՝ առաջարկելու դրամով պահպաների առավել գրավիչ տարբերակներ: Սակայն, կարծում ենք, որ նման միջոցառումները պետք է շարունակական լինեն:

2005 թ. արժութային օրենքի կիրառումը երկրում օտարերկրյա արժույթի օգտագործման խիստ սահմանափակումներ առաջադրեց՝ դրանով իսկ զայելով արժույթի փոխարինումը: 2009 թ. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» << օրենքում փոփոխություններ կատարվեցին՝ ավելի խստացնելով օրենքը խախտողների նկատմամբ տուգանքները: Դոլարացման դեմ պայքարի ուղիներից մեկն էլ դրամի կտրուկ արժեքրկումից հնարավորինս խուսափումն է, քանի որ դոլարացումն առաջին հերթին արտահայտում է բնակչության անվստահությունը ազգային արժույթի նկատմամբ: Իսկ վերջինս կտրուկ արժեքրկումը քաղաքացիներին կրտդի օտարերկրյա արժույթով խնայողությունների կուտակման և օգտագործման՝ նույնիսկ արժութային կարգավորման օրենքի խիստ սահմանափակումների և գրավիչ ավանդային առաջարկների պայմաններում:

Դրամի փոխարժեքի տատանումների պատճառների մեկնաբանումը և լրացրանումը, դրանց կանխատեսելիությունը, մեր կարծիքով, կրարձրացնեն բնակչության վստահությունը ազգային արժույթի նկատմամբ: Արժութային օրենքի պահանջների խստացումը, ճիշտ է, բնակչությանը ստիպել է գործառնություններն իրականացնել ազգային արժույթով հաղթահարելով տարիների սովորութային ուժը, իսկ գրավիչ ավանդային առաջարկները ունեցել են իրենց սպառողը շուկայում, սակայն դոլարացման դեռևս բարձր տեմպերը հիմնավորում են, որ իրականացված և իրականացվող միջոցառումները բավարար չեն հիմնախնդրի լուծման համար:

**Հավելված 1****D1 ցուցանիշի շարժընթացը ՀՀ-ում 2006-2017 թթ. (մլրդ ՀՀ դրամ) <sup>1</sup>**

<b>Ցուցանիշ</b>	<b>2006 թ. Մարտ</b>	<b>2007 թ. Մարտ</b>	<b>2008 թ. Մարտ</b>	<b>2009 թ. Մարտ</b>	<b>2010 թ. Մարտ</b>	<b>2011 թ. Մարտ</b>
Ռեզ.արտ. ավանդներ	146.759	134.972	138.790	283.173	416.342	412.819
Փողի զանգված	358.470	482.928	680.272	637.899	812.274	925.859
D1	40.94%	27.95%	20.40%	44.39%	51.26%	44.59%
<b>Ցուցանիշ</b>	<b>2012 թ. Մարտ</b>	<b>2013 թ. Մարտ</b>	<b>2014 թ. Մարտ</b>	<b>2015 թ. Մարտ</b>	<b>2016 թ. Մարտ</b>	<b>2017 թ. Մարտ</b>
Ռեզ. արտ. ավանդներ	481.903	638.874	735.155	835.215	997.388	1071.202
Փողի զանգված	1134.362	1363.867	1539.023	1601.737	1872.060	2221.947
D1	42.48%	46.84%	47.77%	52.14%	53.28%	48.21%

**D2 ցուցանիշի շարժընթացը ՀՀ ում 2006-2017 թթ. (մլրդ ՀՀ դրամ) <sup>2</sup>**

<b>Ցուցանիշ</b>	<b>2006 թ. Մարտ</b>	<b>2007 թ. Մարտ</b>	<b>2008 թ. Մարտ</b>	<b>2009 թ. Մարտ</b>	<b>2010 թ. Մարտ</b>	<b>2011 թ. Մարտ</b>
Ռեզ. արտ. ավանդներ	146.759	134.972	138.790	283.173	416.342	412.819
Ռեզ. ընդ. ավանդներ	226.410	278.600	372.788	425.210	568.530	629.434
D2	64.82%	48.45%	37.23%	66.60%	73.23%	65.59%
<b>Ցուցանիշ</b>	<b>2012 թ. Մարտ</b>	<b>2013 թ. Մարտ</b>	<b>2014 թ. Մարտ</b>	<b>2015 թ. Մարտ</b>	<b>2016 թ. Մարտ</b>	<b>2017 թ. Մարտ</b>
Ռեզ. արտ. ավանդներ	481.903	638.874	735.155	835.215	997.388	1071.202
Ռեզ. ընդ. ավանդներ	795.053	1003.743	1194.505	1316.299	1565.970	1802.655
D2	60.61%	63.65%	61.54%	63.45%	63.69%	59.42%

**D3 ցուցանիշի շարժընթացը ՀՀ ում 2006-2017 թթ. (մլրդ ՀՀ դրամ) <sup>3</sup>**

<b>Ցուցանիշ</b>	<b>2006 թ. Մարտ</b>	<b>2007 թ. Մարտ</b>	<b>2008 թ. Մարտ</b>	<b>2009 թ. Մարտ</b>	<b>2010 թ. Մարտ</b>	<b>2011 թ. Մարտ</b>
Ռեզ. ֆիզ. անձ. արտ. ցախանջ ավանդներ	31,754	29.866	31.748	31.276	52.292	52.505
Ռեզ. ֆիզ. անձ. ընդ. ժամկետային ավանդներ	61.740	81.474	124.385	173.699	234.970	287.916
D3	51.43%	36.66%	25.52%	18.01%	22.25%	18.24%
<b>Ցուցանիշ</b>	<b>2012 թ. Մարտ</b>	<b>2013 թ. Մարտ</b>	<b>2014 թ. Մարտ</b>	<b>2015 թ. Մարտ</b>	<b>2016 թ. Մարտ</b>	<b>2017 թ. Մարտ</b>
Ռեզ. ֆիզ. անձ. արտ. ցախանջ ավանդներ	60.468	70.117	74.423	79.532	97.298	99.069
Ռեզ. ֆիզ. անձ. ընդ. ժամկետային ավանդներ	396.888	553.247	667.514	734.621	865.892	976.929
D3	15.24%	12.67%	11.15%	10.83%	11.24%	10.14%

**D4 ցուցանիշի շարժընթացը ՀՀ ում 2006-2017 թթ. (մլրդ ՀՀ դրամ) <sup>4</sup>**

<b>Ցուցանիշ</b>	<b>2006 թ. Մարտ</b>	<b>2007 թ. Մարտ</b>	<b>2008 թ. Մարտ</b>	<b>2009 թ. Մարտ</b>	<b>2010 թ. Մարտ</b>	<b>2011 թ. Մարտ</b>
Ռեզ. ֆիզ. անձ. արտ. ժամկետային ավանդներ	52.804	56.888	61.133	140.412	196.448	227.16
Ռեզ. ֆիզ. անձ. ընդ. ժամկետային ավանդներ	61.740	81.474	124.385	173.699	234.970	287.916
D4	85.53%	69.82%	49.15%	80.84%	83.61%	78.90%

<sup>1</sup> Տես ՀՀ ԿԲ կայք՝ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:<sup>2</sup> Տես նոյն տեղը:<sup>3</sup> Տես նոյն տեղը:<sup>4</sup> Տես նոյն տեղը:

<b>Ցուցանիշ</b>	<b>2012 թ. Մարտ</b>	<b>2013 թ. Մարտ</b>	<b>2014 թ. Մարտ</b>	<b>2015 թ. Մարտ</b>	<b>2016 թ. Մարտ</b>	<b>2017 թ. Մարտ</b>
Ոեզ. ֆիզ. անձ. արտ. ժամկետային ավանդներ	291.59	406.831	478.147	546.513	653.533	687.575
Ոեզ. ֆիզ. անձ. ընդ. ժամկետային ավանդներ	396.888	553.247	667.514	734.621	865.892	976.929
D4	73.47%	73.54%	71.63%	74.39%	75.48%	70.38%

*D5 ցուցանիշի շարժընթացը ՀՀ ում 2006-2017 թթ. (մլրդ ՀՀ դրամ)՝<sup>1</sup>*

<b>Ցուցանիշ</b>	<b>2006 թ. Մարտ</b>	<b>2007 թ. Մարտ</b>	<b>2008 թ. Մարտ</b>	<b>2009 թ. Մարտ</b>	<b>2010 թ. Մարտ</b>	<b>2011 թ. Մարտ</b>
Իրական հատ. տր. արտ. վարկեր	57.298	61.417	115.689	201.628	276.155	407.138
Իրական հատ. տր. ընդ. վարկեր	98.875	119.815	204.316	297.088	402.222	544.887
D5	57.95%	51.26%	56.62%	67.87%	68.66%	74.72%
<b>Ցուցանիշ</b>	<b>2012 թ. Մարտ</b>	<b>2013 թ. Մարտ</b>	<b>2014 թ. Մարտ</b>	<b>2015 թ. Մարտ</b>	<b>2016 թ. Մարտ</b>	<b>2017 թ. Մարտ</b>
Իրական հատ. տր. արտ. վարկեր	626.85	758.192	812.791	927.405	968.598	995.126
Իրական հատ. տր. ընդ. վարկեր	778.561	909.227	970.087	1092.119	1132.517	1186.739
D5	80.51%	83.39%	83.79%	84.92%	85.53%	83.85%

## ԱՆՍԻ ԱՐՇԱԿՅԱՆ ДИНАМИКА ДОЛЛАРИЗАЦИИ В АРМЕНИИ

**Ключевые слова:** долларизация, денежно-кредитная политика, показатели, финансовый сектор.

Учитывая роль оценки уровня снижение долларизации в денежно-кредитной политике Армении, в этой статье, я проанализировал показатели, характеризующие динамику уровня долларизации в Армении с 2006 г. по 2017 г. Определен уровень долларизации для реального и финансового секторов. Были обсуждены шаги по преодолению долларизации.

## ANUSH ARSHAKYAN THE DYNAMIC OF DOLLARIZATION IN ARMENIA

**Key words:** dollarization, monetary policy, indicators, financial sector.

Considering the importance of reduction in dollarization level for Armenian monetary policy in the article the dynamics of the indicators that characterized the level of dollarization has been analysed from 2006 to 2017. The dollarization level for real and financial sectors has been determined. The steps to overcoming the dollarization has been discussed.

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը: